7 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 5 — 1896 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 5 № 27

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական բարդութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Գիտակցական բարօրութիւն. Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը. Մատենագրութիւն. Նամակ Օդեսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիւրքիայի ծովեզերքից.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Հեռագիրը մի շատ նշանաւոր քաղաքական լուր հաղորդեց.—Անգլիան շարժում է իր եգիպտական զօրքերը դէպի Դոնգօլա, ունենալով երկու նպատակ՝ թոյլ չը տալ, որ աբիսինիացիները գրաւեն իտալական հողերը Կասսալայում, և երկրորդ՝ հասկացնել Աբիսինիային, որ նա պէտք է իրան զսպի, չը շանայ իր յաղթութիւններից, և մի գուցէ յաւակնութիւն ստանայ նոյն իսկ դէպի եգիպտական սահմանները արշաւելու։

Այդպիսով Անգլիան իրապէս օգնութիւն է մատուցանում Իտալիային՝ վտանգից ազատելով նրա նուաճած հողերը և նրա միջազգային պատիւը։ Անգլիայում տրամադրութիւն կայ այդ օգնութիւնը աւելի ևս առաջ տանել և այդպիսով հասնել ուրիշ քաղաքական նպատակների։ Անգլիական „Morning Post“ լրագիրը յայտնում է, որ Անգլիան թէ՛ իր սեփական ապահովութեան և թէ՛ Եւրոպայի խաղաղութեան համար պէտք է օգնի Իտալիային, ձեռնարկելով նոյն իսկ ֆինանսական բնաւորութիւն ունեցող գործերի՝ Իտալիան առևտուրը պաշտպանելու համար։ Օգնելով Իտալիային, Անգլիան օգնած կը լինի երեքպետեան դաշնակցութեան, այսինքն Աւստրիային և Գերմանիային և յարմար առիթ կունենայ ցրել այն բոլոր թիւրիմացութիւնները, որ նա ունի Գերմանիայի հետ։

Անգլիական զօրքի արշաւանքով քաղաքական մի քանի հարցեր փոխում են իրանց կերպարանքը։ Եգիպտական խնդիրը՝ Անգլիայի Եգիպտոսից հեռանալու խնդիրը այդպիսով մի առժամանակ ոչնչանում է։ Երեքպետեան դաշնակցութեան համար օգտաւէտ է Անգլիայի Եգիպտոսում լինելը, ուստի եգիպտական խնդիրը կամ չէ կարող այժմ յարուցվել կամ եթէ յարուցվի, կը լուծվի Անգլիայի օգտին։ Հասկանալի է ինքն ըստ ինքեան, որ Անգլիան կաշխատի իր ներկայ արշաւանքը ցոյց տալ, իբրև մի մեծ զոհաբերութիւն, իբրև մի այնպիսի էական ծառայութիւն, որի փոխարէն պէտք է երեքպետեան դաշնակցութեան պետութիւնները օգնեն Անգլիային միւս քաղաքական խնդիրներում։ Այդպիսով սկսվում է նկատվել պետութիւնների խմբակցութիւնների մէջ նոր շրջան, որ եթէ մեծ ընդհարումներ առաջ չը բերէ, յամենայն դէպս էական ազդեցութիւն կունենայ միջազգային կնճռոտ խնդիրների լուծման վրա։

Ցաւալի է, որ քաղաքական հարցերը վճռվում են ոչ թէ միջազգային հաստատ պրինցիպների հիման վրա, այլ պետութիւնների շահերի տեսակէտից, և քաղաքականութեան նպատակը արդարութեան և մարդասիրութեան իրագործումը չէ, այլ մասնաւոր շահեր։ Եւ դրա հետևանքն այն է, որ երբ այսօր ուժեղ է պետութիւնների մի խմբակցութիւն, իսկ վաղը մի ուրիշը, դարձեալ չեն լուծվում միջազգային շատ կնճռոտ խնդիրներ, ինչպէս չը վճռվեց Հայոց հարցը, և եղած խնդիրների վրա աւելանում են նորերը։

Եթէ պետութիւնների ընդհանուր ձգտումը լինի միմեանց օգնել՝ լուծելու քաղաքական խնդիրները արդարութեան և լայն մարդասիրութեան պահանջների հիման վրա, այն ժամանակ շատ աւելի հեշտ կը լինի վերացնել այն թիւրիմացութիւնները, որոնք պահում են ամբողջ ազգեր և պետութիւններ անսահմանելի լարված վիճակի մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

XIV

Մինչև այժմ մենք դիտմամբ ոչինչ չասեցինք Մէլիք-Հայկազեանի պատասխանի մասին, նախ քան այդ հարցը լուծէր Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, որպէս զի անուղղակի պրօպագանդա չը համարվէր այդ։ Բայց այժմ, երբ արդէն ընդհանուր ժողովը, ձայների ահագին մեծամասնութեամբ, Մէլիք-Հայկազեանին չնորհեց այդ պատիւը, և ուրեմն հարցը լուծված է,—մենք մեզ թոյլ ենք տալիս մի քանի խօսք ասել այդ խնդրի առիթով, որը մի չաթի է արդէն տաք վիճաբանութիւնների առարկայ է դարձել ընկերութեան անդամների շրջանում։

Մեր կարծիքով, Թիֆլիսի կենտրոնական ընդհանուր ժողովը, ուր բաղմած են ոչ թէ ընտրված պատգամաւորներ ընկերութեան բոլոր ճիւղերի կողմից, այլ լոկ 5 ռուբլի վճարող անդամներ, ինչպէս են և ճիւղի անդամները, բարոյապէս իրաւունք չունի իրան սեփականացնելու մի բարձրագոյն ատեանի անսահման իշխանութիւն, որը աջ և ձախ կարող է veto դնել, խեղդել տեղական ընդհանուր ժողովների ձայնը, և այլն և այլն։ Մի այնպիսի հիմնարկութեան մէջ, ինչպիսին է Բարեգործական ընկերութիւնը, որի գլխաւոր ոյժը կազմում են տեղական 18 ճիւղերը, անհրաժեշտ է չը զրկել այդ ճիւղերին նախաձեռնութեան իրաւունքից, հարկաւոր է միջոց տալ նրանց, որպէս զի կարողանան փոքր ի շատէ անկախօրէն աշխատել, որպէս զի իրաւունք ունենան վարձատրել այս և այն տեղական գործողին, ընկերութեան աշխատաւոր անդամներին։ Ուրիշ խօսքով, Թիֆլիսի ժողովը չը պէտք է ձգտի անսահման կենտրօնացման, այլ, ընդհակառակն, պէտք է ձգտի, որքան կարելի է, ապակենտրօնացում մտցնել ընկերութեան գործունէութեան մէջ, որպէս զի ճիւղերը մի փոքր ազատ գործելու միջոց ունենան...

Եթէ այդ տեսակէտը ունենային հարցի վրա Թիֆլիսի ընդհանուր ժողովի անդամները, այն ժամանակ, օրինակ, Մէլիք-Հայկազեանի պատասխանի հարցը այդքան երկար խօսակցութիւնների նիւթ չէր դառնայ։ Ախալցխայի տեղական վարչութիւնը յարուցել է այդ հարցը, տեղական ընդհանուր ժողովը իր կողմից միանգամայն հիմնաւոր և արդար է գտել նրա առաջարկը։ Ախալցխայի ընդհանուր ժողովից հարցը եկել է Թիֆլիսի խորհրդին։ Խորհուրդն էլ, աւելի զգոյշ լինելու համար, լրացուցիչ տեղեկութիւններ է պահանջել Մէլիք-Հայկազեանի գործունէութեան մասին, և հարցը մանրամասն ուսումնասիրելուց յետոյ՝ որոշել է խնդրել կենտրօնական ընդհանուր ժողովի վաւերացումը։ Ի՞նչ էր մնում անել կենտրօնական ընդհանուր ժողովին.—յարգել Ախալցխայի ճիւղի նախաձեռնները, չնորհիւ բաղմաթիւ ծանօթ մօլլաների և միւդերրիսների, և պէտք է խոստովանել, որ վերջին 10 տարվայ միջոցում զգալի փոփոխութիւն և առաջադիմութիւն կայ Թիւրքաց դպրոցական գործում համեմատելով նախկին վիճակին, բայց այդ առաջադիմութիւնն ամուլ է մնում այն պատճառով գլխաւորաբար, որ ուսանողները և յատկապէս սոֆթաները*) իրանց ուսման ամենամեծ մասը դարձեալ նուիրած են մնում Թիւրքերէն լեզուի ուսման և կրօնական գրքերի ընթերցման, իսկ արտաքին գիտութիւնները մինչև հիմա դեռ ևս շատ աննշան տեղ են բռնում նրանց համար, այն պարզ տրամաբանութեամբ, որ իրանց մեծերից՝ նրանց ներշնչված ըմբռնման համեմատ՝ իսլամական կրօնագիտութիւնը պարունակում է իր մէջ ամեն գիտութիւն և ոչ մի իսկական միւսլիմ (մահմետական) այս սկզբունքին դէմ գնալու իրաւունք չունի։

Ահա այն ամուր յենարանը, որին կոթնած է եղել մինչև հիմա մահմետական կրօնամոլութիւնը՝ եւրոպական կրթութիւնից և արտաքին գիտութիւններից իր հաւատացեալներին խորշեցնելու համար և այդ է եղել, որ ամբողջ դարեր անշարժութեան մէջ է պահել կուրանի հաւատարիմ աշակերտներին։—Բայց իրօք կուրանը արգելում է նորոգութիւնը, արդեօք կուրանի դաւանութիւնը հակառակում է, որ մահմետական ժողովուրդը հեռու պահի իրան ոչ-իսլամների ընդունած հասարակական զարգացման օրէնքներից։—Կուրանի եւրոպացի քննիչների մեծ մասը հակառակ են այդ պնդումին։ Լամարտինի ասելով՝ կուրանի դաւանութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ «համակամութիւն առ Աստուած և գթութիւն առ մարդիկ»։ Բայց մահմետականների համար մեծագոյն դժբախտութիւնն այն է, որ կուրանի մէջ վիստում են իմաստի մթութիւնը և քարոզութեան հակասութիւնները*). և այս պարագան ղէնք է դարձած իսլամական հոգեորականութեան ձեռքը՝ ներկայանալով իբրև կուրանի մեկնող՝ այդ դէպքում միշտ այնպիսի հատուածներ առաջ բերելու և այնպիսի սկզբունքներ տարածելու ժողովրդեան մէջ, որ ուղղակի իր՝ այսինքն, իւլէմայի օգտին և ազդեցութեանը ծառայէին։ Անհրաժեշտ է, որ պետութեան բախտը կապված լինի միշտ իւլեմայի, այսինքն կրօնական անձերի հետ, մանաւանդ թէ այս վերջինները աւելի բարձր նկատվեն, և ահա իբրև մահմետական պետութեան գոյութեան sine qua non առաջ են քչում կուրանի հետևեալ պարբերութիւնը՝ «Մի հոգաք թէ պետութիւնը կը կորչի, միայն թէ կրօնը հաստատ մնայ» և իրօք տեսնում ենք, որ օսմանեան պետութիւնը հետզհետէ նուազում և կորչում է, բայց նրա պետական կրօնը՝ իսլամութիւնը մնում է անխախտ։

Սակայն զարմանալի իրողութիւնը այս է, որ կուրանի ոգուն իսկ հակառակ է, ինչպէս քննիչները պնդում են, այն առանձին կրօնական նուիրապետութեան կազմակերպութիւնը, որ գոյութիւն ունի այսօր մահմետականութեան մէջ։ Կուրանի համաձայն՝ կղերի նպատակը պիտի լինի միայն քարոզել և մզկիթի ներքին ծառայութիւնը հոգալ։ Մահմետական կրօնի պահանջած արտաքին պաշտամունքը հաւատարիմ միւսլիմն առանց պաշտօնական միջնորդի էլ կարող է կատարել և իրօք էլ կան տեղեր, մանաւանդ գիւղերում, ուր մահմետական մօլլան կամ իմամը ոչ մի զանազանութիւն չունի հասարակ ժողովրդից և առանձին մարմին չէ համարում իրան, այլ այսօր իմամ է, վաղը թողնում է իր պաշտօնը, նրա տեղ յաջորդում է ուրիշը, ինքը դառնում է հասարակ աշխարհական՝ իբրև տիտղոս միայն իր անուան կցելով մօլլա բառը. մօլլա Ահմէդ, մօլլա Մէհմէդ, որ երբ իմամութիւնից դուրս է եկած, այսինքն քարոզչութեան և կրօնական պաշտօնէի դեր չէ կատարում, բնաւ չէ տարբերվում իր համայնքի մի այլ անդամից։

Հոգեորականութեան պէտքը գործնական կեանքի մէջ երևան պիտի գար յատկապէս ամուսնութեան և թաղման արարողութիւններում։ Եւ եթէ այսօր այդ արարողութիւնները կատարում է մօլլան, իմամը, ոչ թէ որովհետև ըստ կուրանի որևէ մահմետական իրաւունք չունի նոյնը կատարել առանց իւլէմայի*) մաս կազմելու կամ պարզապէս ասենք՝ առանց հոգեորական կարգ ունենալու, այլ որովհետև դրա հա-

*) Սոֆթա կամ ճշդագոյնը սուխթէ բառը նշանակում է՝ (գիտութեան սիրով) վառված և այդ «վառվածներ»-ն են եղել, որ պահպանել և վառել են իրանց կրօնակիցների ֆանատիկոսութեան կրքերը։ Պարսիկները այդ դասակարգի համար աւելի յարմար բառ ունեն՝ որ է դանիշմէնդ—ուսումնական։

*) Նոյն ինքն արաբացի մարգարէն կամ ճշդագոյնը կուրանի գրի առնողն էլ զգացել է անչուշտ այս հանգամանքը, երբ ներմուծել է նրա մէջ մի այսպիսի պարբերութիւն թէ «գրքում (կուրանում) չորն էլ կայ, թացն էլ»։

*) Իւլէմա՝ թիւրքաց հոգեորական դասին տրված կոչումն է։ Այս բառն արաբերէն է և նշանակում է գիտնականներ։ Հասարակ ժողովուրդը փոխանակ այդ արաբական անուան, պարզապէս օքումուշ է ասում նրանց՝ թիւրքերէն բառով, այսինքն կարդացող։

նութիւնը, յարգել տեղական ճիւղերի ինքնուրոյնութեան սկզբունքը, այլ և հիմնվելով խորհրդի ներկայացրած փաստերի վրա՝ տալ Մէլիք-Հայկազեանին պատասխան անդամութեան տիտղոս:

Բայց չէ: Կենտրոնական ընդհանուր ժողովը ամենամեծ իրաւունքի հետ միասին ամենամեծ պատիւն էլ իրան է ուզում վերապահել:—Ինչպէս կարելի է յարգել տեղական ճիւղի խնդիրքը, քանի որ կենտրոնն անդամ այդպիսի հարց չէ յարուցել. ինչպէս կարելի է տեղական ճիւղերի գործողին պատի անդամութիւն տալ, քանի որ կենտրոնի գործողներին չենք տուել. ինչպէս կարելի է այդպիսի պատիւն արժանացնել մի մարդու, որին մենք, կենտրոնի անդամներս, չենք տեսել, չենք ճանաչում,—ահա գլխաւոր առարկութիւնները դրված հարցի դէմ:

Բարեբաղդաբար, այդպէս մտածողների թիւը փոքր էր, և ժողովը, տաք վիճաբանութիւններից յետոյ՝ վճռեց յարգել տեղական ճիւղի խնդիրքը՝ տալով Մէլիք-Հայկազեանին պատւի անդամութիւն. մի փաստ, որ մեզ համար թանկ է և այն կողմից, որ դրանով կենտրոնը յարգում է այն սկզբունքը, թէ պէտք է յայտնի նախաձեռնութեան իրաւունք տալ տեղական ճիւղերին, չը խեղդել նրանց ինքնուրոյնութիւնը, փոխանակ ամեն իրաւունք կենտրոնացնելու Թիֆլիսի ժողովի ձեռքում...

Այդ մէկ: Իսկ միւս կողմից, մեզ զարմացնում է այն փաստը, որ Մէլիք-Հայկազեանի պատասխան անդամութեան դէմ էին (բացի մի քանիսից, որոնց անկեղծութեանը մենք անպայման հաւատում ենք) այնպիսի մարդիկ (?), որոնց փեշակն է թէ կեանքի մէջ, թէ ժողովներում և թէ նոյն իսկ մամուլի մէջ խունկ ծխել ամեն մի հարուստի, ամեն մի աղայի առաջ, չնորհելով աղգի բարերար, մեծանուն բարեգործ անուններ այնպիսի մարդկանց, որոնք իրանց գողացած, թղթախաղի մէջ կամ բօրասյում տարած փողերի չնչին փշրանքներն են չպրտում խեղճ հայ աղգի երեսին...

Եւ ահա Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովում մեր առաջ պատկերացաւ մի այսպիսի տեսարան,—այն մարդիկ (չարժէ անունները տալ), որոնց փեշակն է սողալ այս և այն հարուստի առաջ, որոնք ամեն օր իրանց խայտառակված գրչով ձգտում են երկինք բարձրացնել ամեն մի փողի տոպրակ, զանազան մութ, բայց ուժեղ անձնաւորութիւնները, որոնց լեզուի և գրչի ծայրին միշտ պատրաստ է ամեն տեսակ մեծահնչիւն տիտղոսներ՝ ում համար և կամենաք, որոնք վերջապէս Բարեգործական ընկերութեան գլխին տարիների ընթացքում էլ ցեխ և հայհոյանք չը մնաց, որ չը թափեն,—այսօր, կլօունին յատուկ այլակերպութեամբ, աչխատում են հաւատացնել, թէ բարեգործութիւն անելը, հասարակութեան ծառայելը ամեն մի մարդու տարրական պարտքն է, թէ Բարեգործական ընկերութիւնը այնքան բարձր և վեհ հիմնարկութիւն է, որ շատ ժլատ պիտի լինի տիտղոսներ չնորհելու մէջ, թէ շատ և շատ մեծ առաքինութիւններ են հարկաւոր պատի տիտղոս ստանալու համար, և այլ այդպիսի անվերջ «գայլի չարականներ»...

Սակայն ընդհանուր ժողովը չը խաբվեց: Ընտրութիւնը կատարվեց, որը ոչ թէ միայն մի յարգանք է դէպի խորհուրդը, դէպի Ախալցխայի ճիւղը և դէպի Մէլիք-Հայկազեան, այլ և մի փափուկ ապտակ այն անձանց, որոնք կարծէք երդվել են կեղտոտել ամեն բան, ինչի որ ժամանակ բաղդ են ունենում...

Խ. Մալումեան

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԲԱՐՕՐՈՒԹԻՒՆ

I

Ժամանակակից հասարակութեան բարօրութիւնը հիմնվում է անհատի բարօրութեան վրա: Որքան շատ են այն միջոցները, որոնցով անհատները կարող են զարգանալ թէ բարոյապէս և թէ նիւթապէս, այնքան ուժեղ է, այնքան կենսունակ է և այդ անհատների համախմբումը, հասարակութիւնը: Միջոցները թոյլ են, անբաւական, քանի թոյլ է հասարակութեան գիտակցութիւնը: Իսկ այդ գիտակցութեան չափը որոշվում է այն պարտաւորութիւններով, որ անխնջ կերպով կատարում է հասարակութիւնը իբրև համախմբումն, իբրև մի հաւաքական մարմին: Պարտաւորութիւնները պիտի դասաւորված լինեն իբրև կեանքի անխուսափելի պահանջ, հաւասարապէս, ընդհանուր ոյժերով գործելու սկզբունքի վրա:

Ահա մի օրինակ:

Խեղճին օգնելը համարվում է ողորմութիւն: Դարերի սկզբից մարդկութեան մէջ յայտնված բոլոր բարոյական վարդապետութիւնները, բոլոր կրօնները գլխաւորապէս հիմնված են մերձաւորին օգնելու վեհ սկզբունքի վրա: Լինելով լոկ մի բարոյական պարտականութիւն, որ եսամոլ, անզարգացած և անչարժ հասարակութիւնների մէջ շատ դժուար կարող է ժողովրդականանալ, այդ սկզբունքը միշտ գործադրվել է իբրև սրտի գործ, իբրև հետևանք այն ազդեցութեան, որ գործում է օգնութեան կարօտ անհատի դրութիւնը տեսնողի ջղերի վրա և այդ էլ այնպիսի մի հետևանք, որ մենք անուանում ենք խղճահարութիւն:

Մարդկային սրտին և ջղերին թողած այդ պարտականութիւնը միշտ և մի յայտնի չափով չէ արտայայտվում: Բօղէն, հանգամանքը, միջնադարը, խնդրողի և տուողի դրութիւնը խղճահարութեան աստիճաններն են որոշում: Եւ այդ է պատճառը, որ պրոֆէսիօնալ աղքատութիւնը միշտ ձգտել է և պիտի ձգտէ որքան կարելի է խիստ կերպով ջղերի և սրտի վրա ազդեցութիւն գործել, եթէ կարելի է այսպէս ասել՝ շահագործել խղճահարութեան զգացմունքը որքան կարելի է մեծ չափերով:

Այս հանգամանքը հաստատում է պատմութիւնը: Հին Հռոմում անտանձ չունայնութեան հետ առաջ էր գնում և սարսափելի աղքատութիւնը: Եւ որքան բազմանում էր աղքատների թիւը, այնքան աւելի կարծրանում էր ունևորների սիրտը: Ուստի իրանց միակ զէնքը, որ ունևորների խղճահարութեան զգացմունքը շահագործելու միջոցն էր, աւելի կարուկ և նպատակին հասնող դարձնելու համար, աղքատութիւնը բաց էր անում իր այն բոլոր յատկութիւնները, որոնք ընդունակ են սիրտ շարժել: Հրապարակներում ցոյց էին տրվում վէրքերը, կտրած, ջարդված կամ ընութիւնից այլանդակված անդամները, մերկ ու սոված մանուկները. ամեն ինչ—և՛ ձայն, և՛ շարժողութիւն, և հիւանդութիւն միացնում էր այդ տեսարանին՝ յուզելու, ցնցելու նպատակով: Եւ այդ ձգտման մէջ աղքատը պիտի անպատճառ առաջ գնար, կատարելագործվեր, որովհետև զեղխութեան անձնատուր եղած հռօմայեցին, ինչպէս և ամեն մարդ, որ միայն մարմնական զուարճութիւնների, կեր ու խումի մէջ է տեսնում իր կեանքի նպատակը, ամեն անգամ չէր կարող ցնցվել, տեսնելով թշուառների մի և նոյն, անփոփոխ դրութիւնը: Հարկաւոր էր օր օրի վրա խեղճութեան պատկերը վատացնել, զրգռող դարձնել, և աղքատութիւնը սարսափելի տեսարաններ էր սարքում՝ ուշադրութիւն գրաւելու համար: Իսկ զեղխութիւնը օրից օր չատացնում էր աղքատների թիւը...

Մի և նոյն ենք տեսնում և ընդհանուր պատմութեան ժամանակ: Սրտի կոշտութիւնը այդպիսի դէպքերում խլացնել է տալիս կարօտեալների նոյն իսկ օրհասական ճիչերը:—Անձնական բարօրութեան նուիրված մարդը իր սիրտը փակելու, իր ջղերը զսպելու և խղճահարութեան զգացմունքը բթացնելու համար միշտ ունի զօրեղ, արդարացնող միջոց—իր սեփական ապահովութիւնը: Նա, եթէ կամենում էք, դեռ բարեհոգի էլ կը ձանայ, սրտից կը ցանկայ որ վերացվի թշուառութիւնը և ամեն մէկը լաւ ապրէ: Մինչև իսկ արտասունք էլ կը կաթեցնէ նա...

Այդպէս է եսամոլ հասարակութիւնը, որ պարտականութեան խոր գիտակցութիւն չունի, որին տուած է իր սեփականը ճանաչելը միայն, աւելացնելով այդ հասկացողութեան վրա և մի այլ հասկացողութիւն, որ անուանվում է «հոգու վարձք», որ սրտի գործ է, արդարութեան, ապագայ վարձատրութեան նշան: Այդ հասկացողութեան հետ միշտ կարելի է կօմպրօմիսներ անել:

Եւ աղքատին, զրկվածին այդպիսի հասարակութեան մէջ մնում է միայն չահագործել իր բոլոր պակասութիւնները, իր մերկութիւնները, մարմնական բոլոր արատները: Ցեմնողը հասկանում է, որ մարմնի այս կամ այն պակասութիւնը մի թշուառութիւն է, իսկ նա, որ կրում է այդ պակասութիւնը իր վրա, գիտէ որ այդ է միայն իր գոյութեան իրաւունքը:

Որքան ստորանում է մարդու կոչումը: Եւ քանի-քանի հազարաւոր մարդիկ անգործ են և ձրիակեր, որովհետև գիտեն, որ իրանց թշուառութիւնը իրանց կերակրողը կը դառնայ, եթէ հրապարակ հանվի:

Այժմ տեսնենք թէ ինչպէս պիտի լինէր ըրութիւնը գիտակցութեան բարձր աստիճանին հասած հասարակութիւնների մէջ:

Լ.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, մարտի 3-ին, դումայի դահլիճում տեղի ունեցաւ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովի չարունակութիւնը: Այս անգամ էլ ներկայ էր մեծ բազմութիւն, աւելի քան 80 հոգի, իսկ վերնատունը լի էր երկու սեռի բազմաթիւ հանդիսականներով:

Երբ ժողովը բացվեց, անդամներից մէկը՝ Ց. Մէլիք-Բախտամեան, խօսք խնդրելով, բողոք յայտնեց, որ տեղական լրագիրներից մէկը, «Արձագանք» թերթը, տպագրելով անցեալ ընդհանուր ժողովի հաշիւը, թոյլ է տուել իրան աղաւաղել և յեղաշրջել եղած խօսակցութիւնները, վերագրել է մէկին այնպիսի խօսքեր, որ նա չէ արտասանել, թագցրել է մի ուրիշի խօսակցութիւնը, որ տեղի է ունեցել ժողովում: Պ. Ատ. Մալխասեան խօսք խնդրելով՝ աւելացրեց, որ ինքը, իբրև ժողովի քարտուղար, արդէն մամուլի միջոցով յայտնել է, որ «Արձագանքի» տպագրած հաշիւը պարունակում է իր մէջ բազմաթիւ աղաւաղումներ և յեղաշրջումներ, և եթէ ժողովը թոյլ կը տայ, ինքը պատրաստ է փաստերով մի առ մի ապացուցանել այդ: Սակայն ժողովը հրաժարվեց զբաղվել այդ հարցով այն հիման վրա, թէ չարժէ ընդհանուր ժողովում ուշ դարձնել «Արձագանքի» գրածների վրա, և ամեն մարդ, մի և նոյն զէնքը գործածեցէք» և սուլթանը տուեց իր զինուորների ձեռքը նոյն զէնքը և նոյն կրթութիւնը, որ ունէին իր թշնամիները, այսինքն եւրոպացիները:—«Գնացէք, փնտռեցէք լոյսը մինչև Չինաստան» ասում էր կուրանը, և Մահմուդ հարկաւորութիւն չունէր մինչև Չինաստան գնալու. Եւրոպան աւելի մօտ էր և նա այնտեղ գտաւ իր փնտռած լոյսը: Այս հաղիսները (մարգարէի խօսք) և նրանց վրա յենված սպառնալիքը բաւական եղան համոզելու իլէմայի գլխաւորներին:

Իսկ գաղանաբարոյ և՝ ոչ մի կարգ ու կանոնի չենթարկվող եէնիչէրիից մի անդամ ընդ միշտ ազատվելու համար, սուլթան Մահմուդ խորամանկութեամբ բոլորին հաւաքեց Կ. Պոլսի Էթ-Մէյդանի կոչված մեծ հրապարակում, նոր կազմված կանոնաւոր զօրաղնդերով պաշարեց և ուղղակի թնդանօթների բերանն ուղղելով նրանց վրա, ռումբերով և փախչողներին էլ զենդակով և սրով կոտորեց, վերջացրեց: Այս մեծ ջարդով ոչնչացան մի ժամանակ ամբողջ Թիւրքիան ան ու դողի մէջ պահող վայրենիները—թւով 30,000, ճիշդ այնչափ, որչափ են այսօր քիւրդ համիդիականները հայաբնակ գաւառներում: Այս անագին կոտորածը սարսափելի տպաւորութիւն գործեց ամբողջ ժողովրդեան վրա, որ համոզվեց այս չատ չօչափելի օրինակով, թէ սուլթանը որոշել էր իր բարենորոգման ընդդիմացող ամեն արգելք coûte que coûte ոչնչացնելու:

(Կը չարունակվի)

մար պահանջվում է որոշ հմտութիւն գործնականի մէջ, որը բնականապէս մատչելի չէ ամեն մահմեդականի: Ահա այս անհմտութիւնը՝ առաջ է բերել իլէմա կամ կարդացող դասակարգի միջամտութիւնը, որ հեռագրեալ աւելի և աւելի ընդարձակ ծաւալ ստանալով, տարածվեց նաև ժողովրդեան քաղաքական կեանքի յարաբերութիւնների վրա: Կուրանի ուսուցման համեմատ, ինչպէս մեկնում են եւրոպացի մեկնիչները և ինչպէս անձամբ էլ լսել ենք փոքր ի չատէ զարգացած և նախապաչարմունքից ըստ կարելոյն զուրկ թիւրքերից, մահմեդականութիւնը առանձին կղերական դասակարգ պէտք չէ որ ունենայ, ինչպէս այդ հաստատված է քրիստոնէական եկեղեցիներում: Եւ եթէ այսօր նա ահագին, վճռողական դեր է ստանձնած բովանդակ մահմեդական աշխարհի ներքին և քաղաքական կեանքի մէջ, դրա պատճառն իրանք խալիֆներն են, որոնք պարբերաբար երկրի բովանդակ կրօնական և դատական պաշտօնավարութիւնը յանձնեցին նրանց ձեռքը:

Այս իրաւունքը, որի չնորհիւ, այնուհետև հարկ եղաւ յատուկ կղերական դասակարգ ստեղծել և պատրաստել միշտ, մի սոսկալի զէնք եղաւ իլէմայի ձեռքին, որը նոյն իսկ սուլթանների համար մահացու է հանդիսացած:—Իլէմայի գլխաւոր ոյժը կայացած է եղել միշտ նրա՝ ֆէթվա տալու իշխանութեան մէջ: Ամեն գործ, մեծ թէ փոքր, ֆէթվա-յով է կատարվում Թիւրքիայում: Ֆէթվան այն կրօնական վճիռն է, որ մի ֆթին կամ իլէմայի ներկայացուցիչը, իբրև իսլամի օրէնսգէտ, տալիս է ամեն մի դէպքում:—Սուլթանները, չը նայելով որ Մուհամէդի փոխանորդը և խալիֆ են, սակայն ստիպված են միշտ դիմել ֆէթվայի, որպէս զի կրօնի հովանաւորութեան ներքև կարողանան անվրէպ աջողեցնել իրանց գործը: Ֆէթվայի բուն միտքն այն է, որ իսլամ կղերը հաստատում է դրանով թէ քաղաքական իշխանութեան կատարելիք մի որոշ գործը՝ համաձայն է կուրանի տրամադրութեան և հետևապէս պարտաւորեցուցիչ է բոլոր ժամմեատականների համար:

Բայց այս էլ ճիշդ է, որ երբ թիւրքայ կառավարութիւնը համոզված է լինում մի որ և է նոր կարգադրութեան անհրաժեշտութեան, նա դժուարութեան չէ հանդիպում ֆէթվա հանելու, որովհետև միշտ հնարաւոր է լինում այնպիսի պարբերութիւն գտնել կուրանում, որի հիման վրա չէյխիւլիսլամը կամ նրա տեղակալները կարողանում են կառավարութեան հայեացքին նպատակաւոր վճիռ արձակել:—Այսպէս՝ դեռ թաղնելով հին դէպքերը, նոյն իսկ մեր օրերում, սուլթան Աբդիւլ-Ազիզին՝ այդպիսի մի ֆէթվայով գահնկէց արին և մի ուրիշ ֆէթվայով էլ նրա յաջորդ սուլթան Մուրադին վերցրին և տեղը դրին ներկայ սուլթան Աբդիւլ-Համիդին: Բայց երկրի մէջ նորութիւն մուծանելու և իլէմայից հարկ եղած ֆէթվան առնելու և ըստ այնմ վճռականօրէն գործելու մասին Թիւրքիայի ժամանակակից պատմութեան մէջ մի չատ բնորոշ և նշանաւոր էջ կայ, որը աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել:

Դարիս առաջին քառորդին, յայտնի սուլթան Մահմուդ, որ իրաւամբ արժանի է Թիւրքիայի վերանորոգիչը կոչվելու, ընդարձակ ծրագիր էր կազմել հիմքից փոխելու մինչև այն ժամանակ իր տիրութեան մէջ տիրող կարգերը և դրանց փոխարէն եւրոպական ձևերը և օրէնքը մտցնելու. նա չատ լաւ զգում էր, որ եթէ Թիւրքիան չարունակէր ընթանալ իր անկարգ, ճնշող, և կրօնապետական դրութիւնով, նրա անկումը չատ հեռի չէր: Մահմուդ՝ իր վերանորոգչի դերը սկսեց՝ զինուորական կազմակերպութիւնից և ապա փոքր առ փոքր աշխատեց դպրոցական հիմնարկութիւններին նոր ուղղութիւն տալ, այս երկու կարևոր գործի ղեկն էլ յանձնելով եւրոպական կրթիչներին:

Այն ժամանակ ևս երկու կատաղի և միանգամայն ամենավտանգաւոր տարրեր ամենից առաջ և ամենից աւելի գլուխ բարձրացրին՝ մտադրված նորամուծութիւնների դէմ: Այդ տարրերը՝ եէնիչէրիները և դէրվիշները էին, որոնք միացած՝ բուռն ընդդիմութիւն ցոյց տուին բարենորոգման գործին: Բայց Մահմուդ հաստատորէն որոշած էր ոչ մի արգելքի առաջ չընկրկիլ. նա պէտք չունէր իր անձի ապահովութեան համար իր հպատակներից վտանգաւորներին չողոքորթելու, ուստի նոյն իսկ իր կեանքը վտանգի ենթարկելով, չընկճվեց Թիւրքիայի այդ երկու կատաղի ոյժի առջև, որոնք երկար դարերի ընթացքում դողացրել, և նոյն իսկ մահացրել էին իրանց հակառակորդներին, սկսելով սուլթաններից:—Նա՝ բուն իսկ գործի սկզբից կտրուկ և վճռական միջոցներ ձեռք առաւ: Իլէմայի՝ կրօնական քողի ներքև յայտնած խիստ ընդդիմութիւնը ճնշելու համար, նա գտնել տուեց կուրանի մէջ՝ իր նպատակին ծառայող պարբերութիւններ, որոնց հիման վրա էլ ֆէթվա արձակել հարկադրվեց չէյխ-իւլ-իսլամը:

Այս պարբերութիւններն էին՝

«Ձեր թշնամիներին յաղթելու համար, մի և նոյն զէնքը գործածեցէք» և սուլթանը տուեց իր զինուորների ձեռքը նոյն զէնքը և նոյն կրթութիւնը, որ ունէին իր թշնամիները, այսինքն եւրոպացիները:—«Գնացէք, փնտռեցէք լոյսը մինչև Չինաստան» ասում էր կուրանը, և Մահմուդ հարկաւորութիւն չունէր մինչև Չինաստան գնալու. Եւրոպան աւելի մօտ էր և նա այնտեղ գտաւ իր փնտռած լոյսը: Այս հաղիսները (մարգարէի խօսք) և նրանց վրա յենված սպառնալիքը բաւական եղան համոզելու իլէմայի գլխաւորներին:

Իսկ գաղանաբարոյ և՝ ոչ մի կարգ ու կանոնի չենթարկվող եէնիչէրիից մի անդամ ընդ միշտ ազատվելու համար, սուլթան Մահմուդ խորամանկութեամբ բոլորին հաւաքեց Կ. Պոլսի Էթ-Մէյդանի կոչված մեծ հրապարակում, նոր կազմված կանոնաւոր զօրաղնդերով պաշարեց և ուղղակի թնդանօթների բերանն ուղղելով նրանց վրա, ռումբերով և փախչողներին էլ զենդակով և սրով կոտորեց, վերջացրեց: Այս մեծ ջարդով ոչնչացան մի ժամանակ ամբողջ Թիւրքիան ան ու դողի մէջ պահող վայրենիները—թւով 30,000, ճիշդ այնչափ, որչափ են այսօր քիւրդ համիդիականները հայաբնակ գաւառներում: Այս անագին կոտորածը սարսափելի տպաւորութիւն գործեց ամբողջ ժողովրդեան վրա, որ համոզվեց այս չատ չօչափելի օրինակով, թէ սուլթանը որոշել էր իր բարենորոգման ընդդիմացող ամեն արգելք coûte que coûte ոչնչացնելու:

(Կը չարունակվի)

մարդ կարող է մասնաւոր կերպով հերքել նրա հաղորդած աղաւաղումները, որից յետոյ անցաւ հերթական հարցերին:

Հերթական հարցը՝ Ախալցխայի վարչութեան նախկին նախագահ Խանակ Մէլիք-Հայկազեանին՝ պատուաւոր անդամ ընտրելու հարցն էր: Նախագահը համառօտ կերպով յիշեց այդ մասին անցեալ ժողովում խօսածները, որից յետոյ սկսվեցին վիճաբանութիւններ: Այս անգամ վիճաբանութիւնները երկար չը տեւեցին, և ժողովը դիմեց քուէարկութեան: Գաղտնի քուէարկութեամբ, Խանակ Մէլիք-Հայկազեան, 51 ձայնով ընդդէմ 18-ի, ընտրվեց պատուաւոր անդամ: (Եօթ հոգի ձեռնպահ մնացին): Երբ նախագահը յայտնեց քուէարկութեան հետևանքը, դահլիճը թընդաց երկարատև ծափահարութիւններով:

Փոքրիկ ընդմիջումից յետոյ սկսվեցին ընտրութիւնները: Պէտք է ընտրվէին՝ ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար, խորհրդի 7 անդամ, 3 փոխ-անդամ, վերատուչող յանձնաժողովի 3 անդամ և գրադարանական մասնաժողովի 5 անդամ:

Ընտրութիւնները գաղտնի քուէարկութեամբ եղան. ընտրվեցին՝ ընդհանուր ժողովի նախագահ՝ բժ. Բագրատ Նաւասարդեան (43 սպիտակ, 27 սև), քարտուղար՝ Սեմիան Մալխասեան (67 սպիտակ, 2 սև). խորհրդի անդամներ՝ Ալէքսանդր Մէլիք-Ազարեան (բացարձակ քուէարկութեամբ, միաձայն), իշխանուհի Մարիամ Թումանեան (բացարձակ, միաձայն), բժ. Վահան Արծրունի (63 սպիտակ, 6 սև), Գ. Բայանդուրեան (58 սպիտակ, 10 սև), Սամսոն Յարութիւնեան (58 սպիտակ, 11 սև): Միւս քուէարկվողները, 4 հոգի, չը ստանալով ձայների $^2/_3$ մասը, ընտրված չը համարվեցին: Փոխ-անդամներ՝ Գրիգոր Վարդանեան (57 սպ., 12 սև), Յակոբ Քոչարեան (57 սպ., 12 սև), Յակոբ Մէլիք-Բախտամեան (43 սպ., 26 սև): Վերատուչող յանձնաժողովի անդամներ՝ Ալէքսանդր Երիցեան (67 սպ., 3 սև), Ստ. Մալխասեան 66 սպ., 3 սև), Ստ. Լիսիցեան (60 սպ. 9 սև), Յ. Դաղբաչեան (54 սպ., 15 սև), Պետրոս Մելքումեան (52 սպ. 17 սև):

Այդպիսով բոլոր ընտրութիւնները կատարվեցին, բաց մնաց միայն խորհրդի երկու անդամի տեղը, որոնց ընտրութիւնը յետաձգվեց յաջորդ ժողովին: Նիստը փակվեց ժամը 12-ին: Վերջում ժողովը ծափահարութեամբ շնորհակալութիւն յայտնեց ժողովի նախագահ հայր Մելեանին, որը, պէտք է խոստովանել, բաւական արդար կերպով և առանց ճնշում գործ դնելու էր կառավարում ժողովը, և եթէ ունէր, իբրև նախագահ, մի պակասութիւն, այդ այն է, որ աւելի քան ներողամտութեամբ էր վերաբերվում կարգապահութիւնը խանգարող մի քանի պարոններին, որոնք իրանց վերին աստիճանի անվայել կերպով էին պահում:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Շնորհակալութեամբ ստացանք պրոֆէսոր Ն. Մառից մի համառօտ, հետաքրքրական տետրակ, նուիրված հայկական մատենագրութեան ուսումնասիրութեան: Տետրակն ամփոփում է երեք յօդուած, որոնք նախապէս զետեղված են եղել Ռուսաց հնագիտական ընկերութեան արևելեան բաժնի յիշատակարանների մէջ:

Առաջին յօդուածում հեղինակը բացատրում է Ադաթանգեղոսի պատմութեան մի մութ տեղը, որտեղ ասված է, թէ ս. Գրիգոր հանում էր իր դատակերքը Ըռոտանտակ, Այրարատեան գաւառում, Վաղարշապատ քաղաքում (Թիֆլիսի տպագրութիւն, եր. 484): Այս Ըռոտանտակը կամ Ըռոդատակը առաջ համարում էին մի անծանօթ տեղի յատուկ անուն: Հ.Հ. Ալիշան և Բ. Սարգիսեան աւելի մօտեցել էին ճշմարտութեան, բայց դեռ չէին պարզել այս բառի ստուգութիւնն ու ճիշդ նշանակութիւնը: Ն. Մառ բազմաթիւ ապացոյցներով, վրաց, պարսից և փէհլէվի լեզուներից բերած համեմատութիւններով ցոյց է տալիս, թէ այս բառը բարդված է երկու պարսկերէն բառից (ռուդ և ստակ) և նշանակում է առուով սռողվող այգեստան: Այս բարդ բառը կրճատված մնացել է պարսից լեզուի մէջ ռուստակ և ռուստա ձևերով:

Երկրորդ յօդուածը քննութիւն է Գալուստ Տէր-Մկրտչեանի (Միաբանի) «Հայկականք» աշխատութեան (12 բանասիրական յօդուած, արտատպված «Արարատի» 1894 թ-ից): Համակրութեամբ խօսելով այս գրուածքի մասին և ցոյց տալով նրա հետաքրքրական կողմերը՝ Ն. Մառ աւելի մանրամասն կանգ է առնում Միաբանի՝ խորենացու «Ցենչայ Սաթինիկ տիկին» յայտնի հատուածի մասին առած բացատրութեան վրա, և անընդունելի է համարում նրան: Նոյնպէս խօսում է խորենացու (բ. 2) հանելուկային տառերի մասին (զայր առ քէ և այլն), և Միաբանի բացատրութիւնը լրացնում է երկու դիտողութեամբ:

Երրորդ յօդուածով հեղինակը ռուս ընթերցողներին ծանօթացնում է Ա. Ե. Ս-ի «Յարութիւն Արարատեանի կեղծիքը» քննութեան հետ, որ երկու տարի առաջ հրատարակվեց Բագուում: Նա համառօտ մէջ է բերում այս քննադատութեան եզրակացութիւնները, որոնք գտնում է խիստ համոզիչ:

Աւելորդ է ասել, որ Ն. Մառի այս փոքրիկ աշխատութիւնն էլ, ըստ սովորականին, փայլում է հմտութեամբ ու խիստ տրամաբան-գիտնական ոճով: Նկատենք միայն, որ առաջին յօդուածում հեղինակի ուշադրութիւնից վրիպել է առու բառը, որ հայացած ձևն է քնված պարսկերէն ռուտ բառին: Նոյնպէս երկրորդ յօդուածում, երկու թիւրիմացութիւն ենք նկատում զատինն, ատին բացատրութեան մէջ, (Լմբինի թարգմանութեան մէջ զատինն=мечъ, իսկ бедро թարգմանչի յաւելուածն է. խորենացու բ. 5 «ձգել զատինն»=սուինը քաշել և ոչ նետել). բայց հեղինակի ընդհանուր եզրակացութիւնը ճիշդ է:

Ստ. Մ.

ՆԱՄԱԿ ՕԴԵՍԱՅԻՑ

—

Փետրվարի 20-ին

Այստեղի մամուլի շրջանում նորերումս տեղի ունեցաւ մի անսովոր երևոյթ: Յարատև ու ծանր աշխատանքից հիւանդացաւ, և յետոյ խելագարվեց «Одесскій Листокъ» լրագրի ռեպորտեօր ոմն Կախօվսկի: Նրան տարան գժանոց, անտէր ու աղքատ դրութեան մէջ թողնելով նրա կնոջը՝ չորս երեխաների հետ:

Նոյն լրագրի յայտնի ֆելիետոնիստ Դօրոշեվիչը գրեց այդ առիթով մի, եթէ ոչ տաղանդաւոր, բայց սրտաշարժ ֆելիետոն, որի մէջ մատնացոյց անելով Կախօվսկու ու նրա ընտանիքի դրութեան վրա, խնդրում էր օգնել նուիրատուութիւններով:

Թէ ինչպէս վերաբերվեց Օդեսայի հասարակութիւնը այդ մարդասէր կոչին,—տեսէք ու զարմացէք: Այդ հրաւէրի առաջին օրը լրագրի խմբագրութիւնը ստացաւ, ինչ էք կարծում... 1200 ր., երկրորդ օրը՝ 1350 ր., երրորդ օրը՝ 950 ր. և այսօր ստացած գումարը հասնում է 8000 ր.: Նուիրատուութիւնը շարունակվում է ու, ի հարկէ, կը հասնի մինչև 10,000 ր. որով կապահովվեն ու կրթութիւն կը ստանան թշուառ Կախօվսկու երեխաները:

Ինչով բացատրել այս երևոյթը: Դօրոշեվիչի ժողովրդականութեամբ կամ նրա ֆելիետոնի ազդեցութեամբ: Ոչ, նա ինքը այդ խոստովանում է, և ոչ համեստութիւնից դրդված: Ճիշդ է, Կախօվսկու եղակի, տրագիկական դրութիւնը ազդում է, բայց ոչ այնչափ: Այդ փաստի ծանրութեան կենտրոնը արտաքին պարագաների մէջ չէ, այլ այն համերաշխութեան, որ կայ մամուլի ու հասարակութեան մէջ, այն գիտակցութեան, որ մամուլը, նրա գործիչները իր՝ հասարակութեան բարեկամներն են, որոնք ծառայում են իր շահերին: Արժանի է ուշադրութեան և այն հանգամանքը, որ հասարակութիւնը ուշադրութեան չառաւ այստեղի մամուլի մէջ կարօտ աշխատաւորի կատարած դերի չափը, նրա գործունէութեան ցած աստիճանը: Կախօվսկին բարեխիղճ, աշխատասէր ու ազնիւ մարդ, գրող էր,—և դա բաւական էր:

Եւ երբ մտքի ասոցիացիայի շնորհիւ յիշեցինք մեր մի քանի գրողների օգտին բացած հանգանակութեան անհետևանքը, կարմրեցինք հայ հասարակութեան տեղ:

Գ. Ե.

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ներկայ տարվայ յուլիսի 2-ին կը լրանայ Կովկասի նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևվիչի ծառայութեան 50-ամեակը: Նորին Կայսերական Բարձրութիւնը ս. Գէօրգի չքանչանի 1-ին աստիճանի միակ ասպետն է:

—

Կիրակի, մարտի 3-ին, կայացաւ Կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան տարեկան հանդիսաւոր ժողովը: Ներկայ էին անդամներից մօտ 50 հոգի և բազմաթիւ այցելուներ: Ժողովի պատուաւոր նախագահ էր հրաւիրված այդ նիստի համար ընկերութեան պատուաւոր անդամ Վ. Գէեվսկի: Կենտրոնի, Բուխարայի բաժնի գործունէութեան, այգեգործական դպրոցի տեղեկագիրների ընթերցումից յետոյ, փիրալովը կարդաց մի զեկուցում տնայնագործութեան մասին, որի մէջ այն միտքն էր յայտնում, որ Անդրկովկասում տնայնագործութեան զարգացումը պէտք է համարել օրվայ խնդիր և նրանով զբաղվել լուրջ կերպով, ձեռնարկելով մի շարք գործնական միջոցներ: Զեկուցանողը կարծում է, որ Գիւղատնտեսական ընկերութիւնը կարող է մեծապէս նպաստել տնայնագործութեան զարգացման և պէտք է նախաձեռնող հանդիսանայ այդ արդիւնաւէտ գործի մէջ: Ապա Ի. Ֆիգուրօվսկի կարդաց զեկուցում կլիմայական հետազօտութիւնների կարևորութեան մասին, բացատրելով, որ երկրագործութիւնը չէ կարող կանոնաւոր առաջ գնալ և կատարելագործվել, քանի գիւղատնտեսը տեղեկութիւն չունի իր հողի և երկրի առանձնայատկութիւնների մասին: Մի կարճ ընդմիջումից յետոյ ժողովը ձեռնարկեց ընտրութիւնների, և ընտրեց ընկերութեան փոխ-նախագահ՝ Իշխան Պ. Ա. Գրուզինսկուն, խորհրդի անդամ Դ. Կոլչեվսկուն և քարտուղար՝ Ի. Եօսելեանին: Ժողովը յայտնեց իր շնորհակալութիւնը ընկերութեան փոխ-նախագահի պաշտօնակատար Ա. Քալանթարին, որը վերջացրեց իր պաշտօնավարութիւնը: Ժողովը տեւեց $2^1/_2$ ժամ:

—

Պարիզի «Societé des Traditions populaires» (Ժողովրդական աւանդութիւնների ընկերութեան) օրգան «Revue des traditions populaires» ամսագրի այս տարվայ յունվարի համարում տպված է մի յօդուած «Հայաստանի հին պատմական երգերը և ժողովրդական աւանդութիւնները» վերնագրով, աշխատութիւն Երուանդ Լալայեանցի: Բազմաթիւ հին պատմագիրներից միայն 5—6 մէջ կարելի է գտնել Հայաստանի հին պատմական երգերի և ժողովրդական աւանդութիւնների բեկորները: Այդ աղբիւրներն են Մար-Աբաս Կատինա, Խորենացի, Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդացի և Գրիգոր Մագիստրոս: Այդ աղբիւրները մանրամասն կերպով ուսումնասիրել են հայր Գաթրճեանը, Լմբինը, Դիւլօրիէն, Պալասանեանը, Ֆէտաէրը, հայր Տաշեանը, և ահա այդ ուսումնասիրութիւնների վրա հիմնված՝ յօդուածագիր Լալայեանցը կամենում է ծանօթացնել եւրոպական ուսումնական աշխարհը Հայաստանի հին պատմական երգերի և ժողովրդական աւանդութիւնների հետ: Յօդուածը հետաքրքրական է և, ինչպէս երևում է, պէտք է շարունակվի մի քանի համարների մէջ:

—

Կիրակի, մարտի 3-ին, Կրուժօկի դահլիճում Վ. Լունկեվիչ կարդաց մի դասախօսութիւն «Երկրի և լուսնի» մասին: Դասախօսութեան նիւթը յարմարեցրած էր երեխաների համար և այդ կողմից շատ աջող էր և մատչելի ունկնդիրներին: Դահլիճը և վերնայարկը կատարելապէս լի էին բազմութեամբ, որի մէջ ահագին մեծամասնութիւնը կազմում էին աշակերտները և աշակերտուհիները: Ընդհանուր տպաւորութիւնը շատ նպաստաւոր էր երիտասարդ դասախօսի համար, որը ցոյց տուեց պօպուլիարիզատորի բոլոր արժանաւորութիւնները: Լունկեվիչ կարդալու է էլի երկու դասախօսութիւն. մէկը առաջիկայ կիրակին «Երկնքի և երկնային երևոյթների» մասին. միւսը յաջորդ կիրակի՝ «Հրաբուղխների» մասին:

—

Դէպի Կարս տանող երկաթուղու գծի մի կէտում, այն է Ջաջուրի մօտ, ինչպէս յայտնի է, պէտք է բացվի մի տօննել, ստորերկրեայ մի անցք: Լսում ենք, որ տօննել անցկացնելու համար նշանակված ծախսերի ծրագիրը պէտք է ենթարկվի խոշոր փոփոխութեան, որովհետև փորուածքները ցոյց են տալիս, որ Ջաջուրի լեռնակոյտի ներսում կայ շատ ջուր, ամբողջ ստորերկրեայ գետակներ: Հարց է ծագել, չէ կարելի արդեօք այդ ջուրը ծառայեցնել Շիրակի դաշտերը ոռոգելու համար:

—

Կիրակի, մարտի 3-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի Քամոյեանց եկեղեցու ծխականների ժողովը՝ հանգուցեալ Սարգիս քահանայ Բէգնազարեանցի տեղ քահանայ ընտրելու և նոյն եկեղեցու հաշուով պահվող Հալաբարի ծխական դպրոցի համար պատգամաւորներ ընտրելու, որոնք իրանց միջից պէտք է ընտրեն մի հոգաբարձու և մի կանդիդատ: Պատգամաւորներ ընտրվեցին՝ Ա. Մէլիք-Ազարեանց, Յ. Սալէնդիարեան, Կ. Մութաֆեան, Ն. Քալանթարեան, Գ. Խան-Աղեան, Շ. Մէլիք-Ղարագեօզեան և Ս. Մանուէլեանց: Հանգուցեալ Բէգնազարեանի տեղ ծխական քահանայ ընտրվեց Ցովսէփ քահանայ Տէր-Պետրոսեանց, որը մի քանի ժամանակ է արդէն հովում է նրա ծուխը:

—

«Русскія Вѣдомости» լրագրում կարդում ենք. «Փետրվարի 25-ին, Մոսկվայում, տօնվեց Մոսկվայի Գասպարեան աղքատանոցի 50-ամեայ տարեդարձը: Մոսկվայի հայոց եկեղեցում պատարագ մատուցանելուց և մաղթանք կատարելուց յետոյ, Գասպարեան աղքատանոցի դահլիճում տեղի ունեցաւ հանդիսաւոր նիստ՝ ներկայութեամբ աղքատանոցի խորհրդի անդամների և Մոսկվայի հայ կոլոնիայի ներկայացուցիչների: Մամիկոնեան մի ճառով նկարագրեց աղքատանոցի 50-ամեայ գործունէութեան պատկերը: Մոսկվայում աղքատանոց հիմնելու նախաձեռնութիւնը պատկանում է գեներալ Պ. Մէլիքովին. այդ ապաստարանը հիմնելու համար խոշոր նուիրաբերութիւն արեց Ի. Մ. Գասպարեան, ապաստարանի համար հողը տուեցին Յ. և Խ. Լազարեանները, և ապա Մոսկվայում ապրող շատ հայեր փողեր էին նուիրում այդ հիմնարկութեան: Ներկայումս աղքատանոցի դրամագլուխը կատարելապէս ապահովացնում է այդ հիմնարկութեան ծախսը, և պրոցէնտներից մինչև անգամ ժամանակաւոր նպաստներ են տրվում Մոսկվայում ապրող աղքատ հայերին: Ապա Լազարեան ճեմարանի դասատու Գ. Խալաթեանը մի ճառ արտասանեց՝ ներկայ հանդիսի առիթով: Այդ օրը մի քանի հնորհաւորական հեռագիրներ են ստացված:»

—

Կիրակի, մարտի 3-ին, դումայի դահլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի 1-ին և 2-դ գիլդիայի վաճառականների ընդհանուր ժողովը: Տարեկան հաշիւը միաձայն հաստատելուց յետոյ, ժողովը վճռեց ընթացք տալ Թիֆլիսում առևտրական դպրոց բանալու հարցին: Ապա տեղի ունեցան ընտրութիւններ գաղտնի քուէարկութեամբ: Վաճառականների աւագ կրկին ընտրվեց Ե. Դավիդով, նրա օգնականներ՝ Ե. Ակօպով և Ի. Շադինով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեզ գրում են Կ. Պոլսից. «Կարինէն և չրջականերէն բազմաթիւ հայեր Ռուսաստան կը գաղթեն: Եթէ այսպէս շարունակէ, կըսէ նամակագիր մը, քիչ օրէն Կարինը պիտի դատարկուի իր հայ բնակիչներէն. մինչդեռ աղքատ դասը գարնան կը սպասէ Ռուսաստան գաղթելու, գիւղացի հայը կը պատրաստուի այսօր իսկ թողուլ իր հայրենի բնակութիւնը ու գաղթականութեան կօրուստը մտնել»:

—

Կ. Պոլսից հեռագրում են եւրոպական լրագիրներին, փետրվարի 19-ից.

«Մուշի բրիտանական փոխ-հիւպատոս Համպսոնը հեռագրում է, որ Գէնջէի գաւառի չրջականների բազմաթիւ հայ ընտանիքներ, որոնք կոտորածների ժամանակ իսլամութիւն էին ընդունել իրանց կեանքը փրկելու նպատակով, նորերս նորից վերադարձան իրանց եկեղեցու գիրկը:»

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Թէ որ աստիճան ստոյգ է չենք գիտեր, կըսուի թէ Ռամազանի 15-ը անցնելէն ետքը, սուլթանը ընդհանուր ժո-

ռացում պիտի ընէ թուրք բանտարկեալներուն համար»:

—

Կ. Պոլսից հեռագրում են Բէյտերի գործակալութեան, փետրվարի 19-ից.

«Սըր Ֆիլիպ Կերրին առաջինն եղաւ դեսպանների մէջ, որ այս տարի իֆտարի հրաւիրվեց պալատը: Ընկնդրութիւնը տեւեց կէս ժամ և ամենամտերիմ ընտանութիւն ունէր: Ասում են, որ խօսակցութեան ժամանակ սուլթանը հաւատացրեց բրիտանական դեսպանին, թէ նա անպատճառ կիրագործի հայկական բէֆորմները և թէ Զեհնի-փաշան անմիջապէս կը նշանակվի վերահսկող յանձնաժողովի նախագահ:

«Ինչ վերաբերում է այն նոր կոտորածների լուրերին, որոնք տարածվեցին երէկ, վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ տասն և հինգ հայ ընտանիքներ կոտորվել են քիւրդերի ձեռքով Բիթլիսի վիլայէթի, Գէնճէ Սանջակի, Զաքագէվուր գաւառում այն պատճառով, որ նրանք առաջ ընդունել էին իսլամութիւն, իսկ յետոյ նորից ընդունեցին քրիստոնէութիւն: Տեղական իշխանութիւնները մերժել էին ճանաչել նրանց իբրև մուսուլմաններ և խորհուրդ էին տուել նրանց վերադառնալ քրիստոնէութեան: Այդ գրգռեց քիւրդերին և դրդեց կոտորել նրանց»:

—

Մեզ գրում են Կ. Պոլսից, փետրվարի 20-ից հետեւեալը. «Խըրդայի-Շէրիֆի անցքը առանց դէպքի վերջացաւ: Ամեն տարի ամեն աղդի վարժարաններէ աշակերտները կը կենային անցքին վրա, երգեր կերդէին և ուղերձներ կը ներկայացնէին: Այս տարի այդ բաներուն և ոչ մէկը տեղի չունեցաւ: Նշանակելի միակ պատահարը երկրաշարժի զօրաւոր ցնցումն էր, որ զգացուեցաւ ճիշդ այն րոպէին, ուր սուլթանը ոտը կը դնէր Սամսոնի կողմը: Զուգադիպութիւնը մեծ ներդործութիւն ըրած է ժողովրդեան խաւերուն մէջ և ընդհանուր խօսակցութեան նիւթ կըլլայ:»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Մարտի 1-ին մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում հոգեհանգստեան պատարագներ մատուցվեցին և հոգեհանգիստներ կատարվեցին: Տաճարները լցված էին աղօթող ժողովրդով և զօրքերով:

2 ժամին պալատական հոգևորականութիւնը կայսր Ալէքսանդր II-ի դամբարանի մօտ հոգեհանգիստ կատարեց: Ներկայ էին՝ Թագաւոր Կայսրը, Մարիա Ֆէօդորօվնա և Ալէքսանդրա Ֆէօդորօվնա Կայսրուհիները, Մեծ Իշխանները և Իշխանուհիները:

3 ժամին գերեզմանի մօտ հոգեհանգիստ կատարվեց, որին ներկայ էին նահանգական աղնուականութեան 26 պարագլուխներ: Պարագլուխները գերեզմանի վրա պսակ դրեցին:

ԲԵՐԼԻՆ, 2 մարտի: Հեղինակաւոր շրջաններում ոչինչ յայտնի չէ այն բանի մասին, թէ կոմս Գոլուխովսկի, ինչպէս հաւատացնում են լուրերը, խօսրդակցում էր Բերլինում, նոյնպէս և Աւստրո-Ունգարիայի ու Անգլիայի միաբան գործողութիւնների հնարաւորութեան մասին:

ՎԻԵՆՆԱ, 2 մարտի: Կրիտէ կղզու վրա յուզմունքները սաստկանում են: Սպանիայսում քրիստոնեաները սպանեցին միքանի թիւրքեր, որի պատճառով այնտեղ գնաց պետական պրոկուրորը հետեակ զօրքի կէս բատալիոնի ուղեկցութեամբ: 40 հոգի ձերբակալվեցին, բայց քննութիւնից յետոյ պրոկուրորը նրանց անմեղ ճանաչեց: Օֆիցէրները, սակայն, դիմադրեցին ձերբակալվածների ազատութեանը, սկսեցին ըստանալ պրոկուրորին և ոչնչացրին նրա կազմած արձանագրութիւնը:

ՄԱՍՍՕՎԱ, 2 մարտի: Մայոր Զալցա հաղորդում է, որ Մենելիքի մօտ գերի են գեներալ Ալէքսէոնէ, գնդապետ Նալա, մայոր Գամմէրա, 6 կապիտաններ և 16 պօրուչիկներ: Գերի են առնված և ուրիշ օֆիցէրներ:

Բանակցութիւններ են սկսված Մենելիքի հետ խաղաղութեան մասին:

ՀՌՕՄ, 2 մարտի: Ասում են, որ Զարչարանքի չաթաթը Վիլհելմ կայսրը կանցկացնի Հռօմում:

Մենելիքը չափազանց ծանր պայմաններ է առաջարկում. նա պահանջում է ուչչիաղան դաչնագրի վերացումը, Տիգրէից հեռանալը, կասսալայի զիջումը և անմաքս առեւտուր Մասսօվայի և Աբիսինիայի մէջ:

Կ. ՊՕԼԻՍ, 2 մարտի: Զեհնի-փաշա, Թիմուրբէյ գնդապետի ուղեկցութեամբ, ճանապարհ ընկաւ Սօֆիա՝ յանձնելու պրինց Ֆերդինանդին Բոլգարիայի իշխան ճանաչելու ֆիրմանը և Օսմանիէի չքանչանը:

Աղանայի վիլայէթից հաղորդում են, որ խառնակութիւններն այնտեղ սաստկանում են:

ՊԱՐԻԶ, 3 մարտի: Աւստրո-ունգարական դեսպանը գնաց Ելիսեան պալատը հանդիսաւոր կերպով յանձնելու հանրապետութեան նախագահին ս. Ստեֆանի չքանչանը: Ֆօր ընդունեց դեսպանին արտաքին գործերի մինիստրի և իր ավիտայի անձանց ներկայութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 3 մարտի: Կոմս Գոլուխովսկի ճանապարհ ընկաւ Վիէննա: Կայսրանում ճանապարհ գցեցին նրան, բացի աւստրո-ունգարական դեսպանից, նոյնպէս իտալական և անգլիական դեսպանները:

ՀՌՕՄ, 3 մարտի: Լրագիրները քննադատում են արիսինցիների հետ բանակցութիւններ սկսելու մասին տեղեկութիւնները: «Opinione» ասում է, որ նախ քան թեր և դէմ կարծիք յայտնելը, անհրաժեշտ է իմանալ խաղաղութեան պայմանները: «Ital. Milit.» լրագիրն ասում է, որ Մենելիքի առաջարկած պայմանները պատաւոր և շահաւէտ են: «Tribuna» վախենում է, թէ չը լինի թէ Մենելիքի պայմանները մի թակարդ է. Մենելիքը պահանջում է, որպէս զի իտալական լիազօրը լիազորութիւններ ունենայ՝ ստորագրված Ումբերտօ թագաւորի ձեռքով, իսկ մի այդպիսի լիազօր կարող է գալ միայն երեք շաբաթից յետոյ:

ՀՌՕՄ, 3 մարտի: Մարտի 2-ին թագաւորի հրատարակած հրովարտակը, որով ներում է չնորհվում զինուորական դատարանի ձեռքով դատապարտված այն բոլոր անձանց, որոնք մասնակցել են Սիցիլիայի և Կարրարայի ապստամբութեանը բացի նրանցից, որոնք պատժի են ենթարկված սպանութեան համար:

ՄԻԼԱՆ, 3 մարտի: Ռուդինի յայտնեց թագաւորին, որ Մենելիքի հետ պատերազմ չարուցանելու համար հարկաւոր է Աֆրիկա ուղարկել 100,000 զօրք և ծախսել կէս միլիարդ, այդ պատճառով խորհուրդ էր տալիս Մենելիքի հետ խաղաղութեան դաչն կապել և բաւականանալ եռանկիւնով, որ կազմում են Մասսօվան, Ասմարան և Կէրէկը: Թագաւորը դիմադրում էր, յետոյ զիջեց Նեապոլիտանեան պրինցի թախանձանքին:

Մենելիքը մայոր Սալսին լաւ ընդունեց և յայտնեց, որ պատերազմի պատճառը Կրիսպին է:

ԱՍՄԱՐԱ, 3 մարտի: Բալդիսէրա հեռագրում է Հռօմ, որ բացի երեք բատալիոններից և երեք բատարէաներից, որոնք ուղարկված են Հռօմից, ուրիշ օգնական զօրքեր չէ ուղում ինքն:

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի: Կոնստանտեան դուքսը, որը անգլիական թագուհու ներկայացուցիչը կը լինի սրբազան թագադրութեան հանդիսին, կերթայ իր ամուսնու հետ, նոյնպէս և պալատական պաշտօնեաների սվիտայով: Դուքսը մինչև Պետերբուրգ կերթայ «Ալբերտ և Վիկտորիա» թագաւորական նաւով և 14 օր կը մնայ Ռուսաստան:

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի: Մարկիզ Սալսբիւրիի քարտուղարները հաստատում են «Times»-ի հաղորդածները, թէ եգիպտական զօրքերը չարժվում են դէպի Դոնգօլա:

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի: Համայնքների ժողովը ընդունեց մի բիլ՝ նոր նաւեր կառուցանելու մասին:

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի: «Times» հաղորդում է, որ եգիպտական զօրքերի չարժման վերջնական նպատակը, անկասկած, Կասսալայի ազատութիւն է: Դոնգօլայի գրաւումը էական նշանակութիւն ունի Եգիպտոսի պաշտպանութեան համար և ամենալաւ պատճառ է Օմդուրմանի վրա արշաւանք գործելու համար:

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի: «Times» ասում է, որ անգլիական քաղաքականութեան եգիպտական չահերը՝ չարժումը դէպի Դոնգօլա անյետաձգելի անհրաժեշտութիւն դարձրին, որովհետև այն հարուածը, որ հասցրվեց եւրօպական պետութիւնների վարկին իտալացիների կրած պարտութեամբ, չէ ոչնչանում Մենելիքի հետ խաղաղութեան դաչն կապելով: Անգլիական տիրապետութեան տարիները Եգիպտոսում մի զօրեղ զօրք տուեցին Անգլիային. հասաւ Սուդանը վերադարձնելու ժամանակը:

ԿԱՅԻՐԷ, 3 մարտի: Եգիպտական զօրքերը անյապաղ կարչաւեն դէպի Դոնգօլա: Անգլիական գնդի մի բատալիոն հրաման ստացաւ գնալ դէպի Վադիգալֆա, ուր գնում է այժմ և եթ եգիպտական զօրքի նեգրների մի բատալիոն:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 1-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	94 ր.	10 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	75 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	25 »
Ոսկի — — արժէ . .	7 »	50 »
Մաքսային կուպոններ — .	149 »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	7½ »	— »
4% պետական բէնտա	98 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	283 »	— »
— — երկրորդ —	254¾ »	—
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	218 »	75 »
5% պետական երկաթուղ. բէնտա.	100 »	50 »
4% ներքին փոխառութեան . . .	97¾ »	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100⅜ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	100⅜ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	102⅛ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	102 »	— »
Օդէսայի — —	100 »	50 »
Թիֆլիսի — —	99 »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	100 »	50 »
5% — — — . .	99½ »	— »
Ռութայիսի — 6% . .	100 »	50 »
5% — — — . .	99 »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վիներական հիւանդութիւնների:

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խաչորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խրի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

«ԵԱՍԼԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Ընդունվում են սուր-վարակիչ հիւանդութիւններով (կարմրուկով, ծաղիկով, քութէչով, դիֆտէրիտով) հիւանդացած երեխաներ: Ծծկեր երեխաները կարող են ընդունվել իրանց մայրերի կամ դայեակների հետ: Ընդունելութիւնը ամեն օր: Բժշկութիւնը և խնամատարութիւնը ձրի է: Հասցէն Վէրա, Ծղնէտսկի փողոց, տուն Խալեապլինի: (№ 9) 8—10

Մեծ Արժանաւորութեան

ՀՈՏԱՒԷՏ ՋՐԵՐ

"Պարսկական Եասաման"

Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն

„Պարսկական Եասաման"

Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եասաման"

Սապոն „Պարսկական Եասաման"

Պոմադա „Պարսկական Եասաման"

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Պրէյս-կուրանտը ձրի:

(ամ. 30) (№ 73) 11—12

Զգուշացրէք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպկինները, սեւութիւնը, գեղին բծերը, պուզիկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ: Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան:

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար:

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.:

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում:

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իրդէնսի մօտ Մոսկվայում: Դէպօ, Թիֆլիսում Ագմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առեւտրի Կովկասեան ընկերութեան մէջ, Ծուրինովի և Գրիվնակի, պ.պ. Պոպօվների և Արիստակովի մօտ:

(№ 7) (ա. 1 և 15) 8—24

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին: Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում գետնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ: Նա շատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ձերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները:

ՓՈՇԻ՝ ՄԻԶԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփոխարինելի է լուեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցեցը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար: Փոշու. ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետեանքը զարմանալի: (№ 23) 2—50

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Ղեւոնդեանի մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգեւորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԵԱՆԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգեւորականների:

Նոյն տեղը վաճառվում են.—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖԻ, ՌԱՖԱՑԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Ց. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօբելեանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծադիր 3 ռուբլի, ՄԻԶԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ կոչված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կոպէկ:

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Ճանապարհածախսը գնողի վրա է: (№ 117) 7—10

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Марта 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.